

## **Սյունիքում մեկնարկեցին Ուսանողների միջազգային օրվան նվիրված միջոցառումները**

Նոյեմբերի 16-ին մեկնարկեց ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի մշակույթի և սպորտի բաժնի և ՀԵՀ Սյունիքի մարզային կենտրոնի կողմից կազմակերպված <<Մրցունակ ուսանողությունը՝ Սյունիքի զարգացման գրավական>> տեղեկատվական, մշակութային, երիտասարդական միջոցառումների շարքը, որի նպատակն է Ուսանողների միջազգային օրը նշանավորել Սյունիքում՝ ներկայացնելով մարզի ողջ կրթական և ուսանողական ներուժը, ինչպես նաև կարևորել ուսանողների դերը Սյունիքի զարգացման ու տարբեր բնագավառներում հետագա առաջընթացի գործընթացներում:

Ծրագրին մասնակցեցին Սյունիքի մարզի բարձրագույն ուսումնական հաստատությունների, մասնավորապես, ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի, Գորիսի պետական համալսարանի, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի Գորիսի մասնաճյուղի, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Սիսիանի մասնաճյուղի, ինչպես նաև միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների՝ Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջի, Կապանի արվեստի պետական քոլեջի, Կապանի պետական բժշկական քոլեջի, Եվրոպական տարածաշրջանային քոլեջի Կապանի մասնաճյուղի, Գորիսի պետական քոլեջի, Սիսիանի պետական քոլեջի և Մեղրու պետական քոլեջի ուսանողները: Մարզկենտրոն Կապանում ուսանողները նախ այցելեցին Բաղաբուրջի հուշահամալիր, որտեղ ծաղիկներ դրեցին զոհված ազատամարտիկների հուշաքարերին, այնուհետև՝ Գարեգին Նժդեհի անվան հուշահամալիր և Կապանի երկրագիտական թանգարան, որտեղ ուսանողներին հանգամանալի ներկայացվեցին թանգարանի նմուշները:

Օրվա երկրորդ կեսին տեղի ունեցավ Ուսանողների միջազգային օրվան նվիրված տեղեկատվական, մշակութային միջոցառում, որի ժամանակ բոլոր ուսումնական հաստատությունները ներկայացրին իրենց գործունեությունն ու առաքելությունը, ինչպես նաև ներկայացան մշակութային համարներով: Կազմակերպվել էր նաև ցուցահանդես, որտեղ ներկայացվել էին տաղանդավոր ուսանողների ձեռքի աշխատանքները: Միջոցառմանը ներկա էին ուսանողներ, դասախոսներ, պաշտոնյաներ:

Շնորհավորական խոսքով հանդես եկան Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի մշակույթի և սպորտի բաժնի պետ Ս. Դավթյանը, ով ուսանողներին ներկայացրեց ՀՀ Սյունիքի մարզպետ Ս. Խաչատրյանի շնորհավորական խոսքը: Միջոցառումն ավարտին ուսանողներին և ուսանողական խորհուրդներին հանձնվեցին նվերներ, իսկ օրվա ավարտին ուսանողները մասնակցեցին ժամանցային ծրագրի: